



ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆ

Մ.Միքայելյան

<<30>> օգոստոսի 2022 թ.

**ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ
ԴԱՍՂԵԿԻ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ
ՏԱՐԵԿԱՆ ԾՐԱԳԻՐ**

Արագածոտնի մարզ գ. Աղձք _____

Աղձքի միջն. դպրոց-դասարան _____ VI դասարան _____

ուսումնական հաստատության անվանումը, դասարան

_____ Հայրապետյան Լալա Ռոբերտի _____

դասղեկի ազգանունը, անունը, հայրանունը

<<2022-2023>> ուսումնական տարի

ՀԱՆՐԱԿՐԹԱԿԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՉԱՓՈՐՈՇԻՉ (կրճատումով)

I. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Հանրակրթության պետական չափորոշիչը սահմանում է հանրակրթական հիմնական ծրագրերի բովանդակության պարտադիր նվազագույնը, առավելագույն ծավալը, ըստ կրթական մակարդակների շրջանավարտներին ներկայացվող ընդհանրական որակական պահանջները, սովորողների գնահատման համակարգը:

V. ՄԻՋՆԱԿԱՐԳ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ

15. Միջնակարգ կրթության բովանդակային բաղադրիչները որոշակիացվում են ըստ ուսումնական բնագավառների և հանրակրթական դպրոցի աստիճանների՝ հաշվի առնելով սովորողների զարգացման ֆիզիոլոգիական, հոգեբանական և ազգային առանձնահատկությունները:

2. Կարողություններ և հմտություններ Այս բաղադրիչով տրված կարողությունների և հմտությունների ամբողջությունը սովորողին հնարավորություն է ընձեռում գործնականում կիրառել ստացված գիտելիքները, հարստացնել ճանաչողական գործունեության սեփական փորձը, զարգացնել տրամաբանական, հաղորդակցական, համագործակցային, ինքնուրույն գործունեության և ստեղծագործական ունակությունները, նպաստում է նրա սոցիալականացմանը:

Չափորոշիչներում առանձնակի կարևորվում են ճանաչողության հետևյալ մեթոդները՝ վերլուծում, մասնավորում, համադրում, վերացարկում, անդրադարձում, մակածում (ինդուկցիա), արտածում (դեդուկցիա), ընդհանրացում, կանխատեսում:

1) Ճանաչողական, տրամաբանական կարողություններ և հմտություններ ենթաբաղադրիչի նպատակն է՝ սովորողին ծանոթացնել ճանաչողության մեթոդներին և ձևավորել դրանք գործնականում կիրառելու կարողություններ ու հմտություններ, այդ թվում՝

ա. գիտելիքներ ձեռք բերել՝ զգայության, ընկալման և մտապատկերման միջոցով,

բ. վերլուծել՝ քննարկման, մեկնաբանման, տարանջատման,

համեմատության, խմբավորման միջոցով,

գ. մտահանգումներ անել՝ ամբողջացման, հակադրման, բնութագրման, հիմնավորման, ամփոփման, կշռադատման միջոցով,

դ. ընդհանրացնել և համադրել՝ վերացարկման, գնահատման, արժևորման, փաստարկման, ապացուցման, կանխատեսման, ծրագրման միջոցով,

ե. հիմնախնդիրը դիտարկել տարբեր տեսանկյուններից, ուսումնասիրել դրա լուծման հնարավոր եղանակները և

գտնել լուծումներ,

զ. երևույթների նկատմամբ դրսևորել առողջիետաքրքրություն և քննադատական մոտեցում,

է. վերլուծել իրավիճակը և կատարել եզրակացություններ,

ը. ինքնուրույն որոշումներ ընդունել և հիմնավորել,

թ. նպատակներ դնել, մշակել դրանց հասնելու ուղիներ և ծրագրել սեփական գործը.

2) հաղորդակցական կարողություններ և հմտություններ ենթաբաղադրիչի նպատակն է, որ ուսումնառության արդյունքում յուրաքանչյուր սովորող կարողանա՝

ա. լսել, ընկալել և համարժեք վերաբերմունք դրսևորել,

բ. բանավիճել, բանավոր և գրավոր տրամաբանված խոսք կառուցել,

գ. ըստ նշանակության և տեղին օգտագործել սովորած տերմինները (եզրերը), հասկացությունները և արտահայտությունները,

դ. հասկանալ և ճիշտ օգտագործել հաղորդակցման ոչ խոսքային միջոցները,

ե. օգտվել ժամանակակից հաղորդակցման տեխնիկական միջոցներից և այլն.

3) համագործակցային կարողություններ և հմտություններ ենթաբաղադրիչի նպատակն է, որ ուսումնառության արդյունքում յուրաքանչյուր սովորող կարողանա՝

ա. աշխատել խմբում, միասնական որոշումներ ընդունել և դրանց համար պատասխանատվություն կրել,

բ. սովորել և սովորեցնել,

գ. դրական հարաբերություններ ստեղծել, դրսևորել առողջ մրցակցություն,

դ. սեփական շահը գիտակցելով՝ ճանաչել և ընդունել ուրիշների շահերը,

ե. բախումնային իրավիճակներում հավասարակշռված պահվածք դրսևորել,

զ. ուսման ընթացքում և աշխատանքային հարաբերություններում լինել բարեկիրթ, հարգել գործընկերոջ իրավունքները,

է. զերծ մնալ բարոյական չափանիշներին հակասող նախապաշարումներից, կանխակալ մոտեցումներից,

ը. իրավիճակները դիտարկել և մեկնաբանել այլոց տեսանկյունից և այլն.

4) ստեղծագործական կարողություններ ենթաբաղադրիչը նպատակ ունի զարգացնելու սովորողի ստեղծագործական ընդունակություններն ու երևակայությունը, որպեսզի յուրաքանչյուր սովորող կարողանա՝

ա. ստեղծագործաբար կիրառել ձեռք բերած գիտելիքները,

բ. դրսևորել ստեղծագործական երևակայություն,

գ. երևակայել, խորհել և ենթադրություններ անել ապագայի մասին,
դ. ընկալել և ընդունել նյութական և հոգևոր նոր արժեքները.

5) Ինքնուրույն գործունեության կարողություններ և հմտություններ ենթաբաղադրիչի նպատակն է, որ ուսումնառության արդյունքում յուրաքանչյուր սովորող կարողանա՝

ա. անաչառ գնահատել սեփական ուժերն ու կարողությունները և ըստ այդմ ծավալել ուսումնական, աշխատանքային գործունեություն,

բ. գիտակցել սեփական գործի կարևորությունը, դրա նկատմամբ պատասխանատվություն և պարտաճանաչություն դրսևորել,

գ. ճիշտ տնօրինել ժամանակը, մշակել և պահպանել աշխատանքի և հանգստի ժամակարգ (ռեժիմ), վերահսկել սեփական վարքը,

դ. խնամել սեփական մարմինը, դրսևորել այն մարզելու կամք,

ե. զբաղվել ինքնադաստիարակությամբ և ինքնակրթությամբ,

զ. կողմնորոշվել տարբեր իրավիճակներում, գնահատել սեփական քայլերը և դրանց հետևանքները:

3. Արժեքային համակարգ

Սույն բաղադրիչով նախատեսված համակարգն արտահայտվում է սովորողի համապատասխան գործողությունների, վերաբերմունքի և վարքի միջոցով:

1) Այս բաղադրիչի նպատակն է ձևավորել անձ և քաղաքացի, որը պետք է՝

ա. գիտակցի սեփական մշակույթի՝ լեզվի, պատմության, արվեստի, ավանդույթների, ազգային այլ արժեքների կարևորությունն ու նշանակությունը և լինի դրանց կրողը,

բ. հարգի Հայաստանի պետական խորհրդանիշները, լինի հայրենասեր, կարևորի ազգային հիմնախնդիրների լուծման գործում իր մասնակցության անհրաժեշտությունը,

գ. գիտակցի, որ գիտությունը, արդիական տեխնոլոգիաները, կրթությունը մեծագույն արժեքներ են ժամանակակից աշխարհում,

դ. գիտակցի, որ իր համար կարևորագույն արժեքներ են գիտելիքները, աշխատանքային հմտությունները, մասնագիտական վարպետությունը,

ե. կարևորի բարոյական չափանիշները և քրիստոնեական ու համամարդկային արժեքները, լինի ազնիվ, զթասիրտ, արդարամիտ, օրինապահ, բարեկիրթ,

զ. կարևորի գեղագիտական արժեքները, գնահատի գեղեցիկը, բարին և ճշմարիտը,

է. գիտակցի իր տեղն ու դերն ընտանիքում և հասարակության մեջ. լինի նախաձեռնող, դրսևորի արժանավայել պահվածք,

ը. գիտակցի ծնողների, տարիքով մեծերի և փոքրերի, ընկերների և համայնքի նկատմամբ հարգանքի դրսևորման կարևորությունը,

թ. հարգի մարդու իրավունքներն ու հիմնարար ազատությունները, լինի մարդասեր, հանդուրժող, քաղաքակիրթ վերաբերմունք դրսևորի ուրիշ ժողովուրդների ներկայացուցիչների և նրանց մշակույթների հանդեպ,

ժ. անաչառորեն գնահատի իր ուժերն ու կարողությունները՝ բացառելով սեփական անձի թերագնահատումը կամ գերագնահատումը,

ժա. դրսևորի աշխատասիրություն, հնարամտություն, նպատակադրվածություն, արժևորի ու գնահատի սեփական և այլոց աշխատանքը,

ժբ. մշտապես հոգ տանի իր առողջության մասին, կարևորի մարմնակրթության դերը, հետևողական լինի առողջ ապրելակերպի և անվտանգ կենսագործունեության կանոնների կիրառման գործում:

ՕՐԻՆԱԿԵԼԻ ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ

<<Հայաստանի Հանրապետության պետական
հանրակրթական ուսումնական հաստատություն>>,
պետական ոչ առևտրային կազմակերպության
(կրճատումով)

42. Դասարանի ղեկավարը (դասղեկը)

- ա) դաստիարակալական աշխատանք է կատարում՝ իր դասարանի սովորողների շրջանում՝ սերտորեն համագործակցելով մյուս ուսուցիչների հետ,
 - բ) ապահովում է սովորողների նկատմամբ հաստատության և ընտանիքի մանկավարժական պահանջների միասնականությունը,
 - գ) անհրաժեշտության դեպքում սովորողների համար կազմակերպում է ուսումնական օգնություն,
 - դ) իրականացնում է դասարանի համար սահմանված գործավարությունը, հաստատության տնօրինությանը ներկայացնում սովորողների առաջադիմության, հաճախումների և վարքի մասին
 - ե) կազմակերպում է սովորողների առողջության ամրապնդմանն ու ֆիզիկական զարգացմանը նպաստող միջոցառումներ, մրցույթներ, նպատակային էքսկուրսիաներ, շրջագայություններ, հետևում տնային հանձնարարությունների կատարմանը, ուսման և հանգստի կազմակերպմանը,
 - զ) հաստատության մանկավարժական խորհրդի քննարկմանն է ներկայացնում վարքի կանոնները կոպտորեն խախտած սովորողի հարցը.
 - է) արգելվում է սովորողների, ուսուցիչների և ծնողների այն նախաձեռնությունները, որոնք կարող են սովորողի առողջության, կյանքի համար վտանգ պարունակել կամ խաթարել ուսումնադաստիարակչական աշխատանքների իրականացումը:
71. Հաստատության մանկավարժական աշխատողները պարտավոր են ապահովել կրթական ծրագրերի կատարումը, հանրակրթական պետական չափորոշիչներով որոշվող ծրագրերի բովանդակության պարտադիր նվազագույնի յուրացումը սովորողների կողմից:

73. Սովորողն իրավունք ունի՝

- ա) անվճար ստանալու տարրական ընդհանուր, հիմնական ընդհանուր և միջնակարգ (լրիվ) ընդհանուր կրթություն,
 - բ) անկախ բնակության վայրից սահմանված կարգով ընտրելու հաստատությունը և ուսուցման
 - գ) անվճար օգտվելու հաստատության առանձին ծառայություններից.
 - դ) հաստատությունում յուրացնելու լրացուցիչ վճարովի կրթական ծրագրեր.
 - ե) ազատ արտահայտելու սեփական հայացքներն ու համոզմունքները
 - զ) առանց հիմնական կրթություն ստանալու՝ 16 տարին լրանալուց հետո, ծնողների (որդեգրողների կամ հոգաբարձուի) համաձայնությամբ, թողնելու ուսումը:
74. Հաստատության արգելվում է, առանց ծնողների և սովորողների համաձայնության, սովորողներին ընդգրկել այնպիսի աշխատանքներում, որոնք նախատեսված չեն հանրակրթական ծրագրերով և սույն կանոնադրությամբ:
75. Արգելվում է սովորողների նկատմամբ հոգեկան և ֆիզիկական բռնության գործադրումը:
76. Սովորողը պարտավոր է բարեխղճորեն սովորել, խնամքով վերաբերվել հաստատության գույքին, հարգել հաստատության սովորողների և աշխատողների իրավունքներն ու արժանապատվությունը, պահպանել հաստատության ներքին կարգապահական կանոնները:
77. Հաստատության ներքին կարգապահական կանոնները կոպտորեն խախտելու համար սովորողը նախարարության սահմանած կարգով կարող է հեռացվել հաստատությունից:
78. Ծնողն իրավունք ունի պաշտպանելու երեխայի օրինական շահերն ու իրավունքները, մասնակցելու հաստատության կառավարմանը:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Տեղեկություններ աշակերտների մասին	2-3
Կրթարդարացիության աշխատանքների շտաբի կողմից իրականացվող ուղղորդումները	4-9
Դասագրքերի բաշխումը	10-11
Դասարանի մասնակցությունը ՀԱՄԱԴՊՐՈՑԱԿԱՆ, ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԵՎ ՄԱՐԶԱՅԻՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻՆ	12
Աշակերտների մասնակցությունը ՆԱԽԱՄԻՐԱԿԱՆ, ԳԵՂԱՐՎԵՍՏԱԿԱՆ, ԵՐԱԺՇՏԱԿԱՆ և ԱՅԼ ԽՄԲԱԿՆԵՐԻՆ	13
Դասղեկի ԴԱՍՏԻԱՐԱԿՉԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԹԵՄԱՏԻԿԱՆ	14
Դասղեկի աշխատանքները ԴԺՎԱՐ ԴԱՍՏԻԱՐԱԿՎՈՂ, ՍՈՑԻԱԼԱՊԵՍ ԱՆԲԱՐԵԼՊԱՍՏ ՎԻՃԱԿՈՒՄ ԳՏԵՎՈՂ, ԾՆՈՂԱԶՈՒՐԿ ԱՇԱԿԵՐՏՆԵՐԻ ՀԵՏ	15
Դասղեկի ԴԱՍԱԼՍՈՒՄՆԵՐ	16
ԾՆՈՂԱԿԱՆ ԺՈՂՈՎՆԵՐ, ԱՇԽԱՏԱՆՔ ԾՆՈՂՆԵՐԻ ՀԵՏ	17
ԱՇԽԱՏԱՆՔ ԾՆՈՂԿՈՄԻՏԵԻ ՀԵՏ	18
Դասարանի ԲՆՈՒԹԱԳԻՐԸ ՈՒՍՏԱՐՎԱ ԱՎԱՐՏԻՆ	19
ՆՇՈՒՄՆԵՐԻ ԵՎ ԴԻՏՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՄԱՐ	20

ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԱՇԱԿԵՐՏՆԵՐԻ ՄԱՍԻՆ

համար	հասցեն	Հեռախոսի համարը	Ծնողի (խնամակալի) աշխատանքի վայրը կամ զբաղմունքը	Ընտանիքի սոցիալական վիճակը	ծանոթություն
1	Գ.Աղձք 21փ տուն15	094352740	Բանվոր	Բավարար	
2	Գ.Աղձք 4փ տուն13	098394044	Ատամնատեխնիկ	Լավ	
3	Գ.Աղձք 19փ տուն1	098100548	Բանվոր	Բավարար	
4	Գ.Աղձք 19փ տուն2	055246038	Մենատնտես	Բավարար	
5	Գ.Աղձք 6փ տուն16	094583249	Մենատնտես	Լավ	
6	Գ.Աղձք 14փ տուն14	033664852	Անհատ ձեռներեց	Լավ	
7	Ք. Աշտարակ Ա. Մանուկյան 1/12	094826045	Հնագետ	Լավ	
8	Գ.Աղձք 14փ տուն16	055744821	Մենատնտես	Բավարար	
9	Գ.Աղձք 13փ տուն 15	098527869	ուստիկան	Լավ	
10	Գ.Աղձք 5փ տուն12	098988502	Մենատնտես	Լավ	
11	Գ. Աղձք19փ տուն38	033427930	բանվոր	Լավ	
12	Գ.Աղձք 1փ տուն20	094556012	Մենատնտես	Բավարար	
13	Գ.Աղձք 8փ տուն13	055958234	Մենատնտես	Լավ	
14	Գ.Աղձք1փ տուն48	098642013	Մենատնտես	Լավ	
15					
16					
17					
18					
19					
20					
21					
22					

ԿՐԹԱԴԱՍՏԻԱՐԱԿՉԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՀԻՄՆԱԿԱՆ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

- ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ (դասարանի ընդհանուր բնութագիրը)_ 6-րդ դասարանում սովորում են 14 աշակերտ` 7 տղա, 7 աղջիկ: Բոլորն էլ օրինակելի, կարգապահ, առաջադեմ աշակերտներ են: Աչքի են ընկնում իրենց աշխատասիրությամբ և կարգապահությամբ:Աշակերտների մեծ մասը մասնակցում է համադպրոցական միջոցառումների:

Ուսումնադաստիարակչական նախատեսվող աշխատանքները ուստարվա ընթացքում 2022-2023 ուս. Տարվա ընթացքում նախատեսված աշխատանքներն են.

Ա. Անցկացնել դասղեկի ժամ շաբաթը մեկ անգամ:

Բ.Քննարկել թույլ առաջադիմություն ունեցող աշակերտների հարցը և կազմակերպել լրացուցիչ աշխատանքներ:

Գ. Կատարել դասալսումներ:

Դ. Ծնողներին տեղեկացնել աշակերտների առաջադիմության և կարգապահության մասին:

Ե. Կազմակերպել ուսումնադաստիարակչական զրույցներ, հրավիրել բաց դասեր:

Զ. Կազմակերպել միջոցառումներ և էքսկուսիաներ:

ՀԱՅԵՑԻ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

3.1 Հոգևոր դաստիարակություն___Կարևորել կրոնի դերը հայ ժողովրդի ազգապահպան գործում: Զրույցների միջոցով ներկայացնել երեխաներին, թե ինչ վտանգ են ներկայացնում աղանդավորական շարժումները պետության և եկեղեցու միասնությանը: Կազմակերպել հոգևոր թեմաներով զրույցներ:

3.2 Գեղագիտական դաստիարակություն___Կազմակերպել գեղագիտական բնույթի զրույցներ և միջոցառումներ: Գղագիտական ճաշակի ձևավորման նպատակով կազմակերպել այցելություն թանգարաններ և թատրոն:

3.3 Ռազմահայրենասիրական դաստիարակություն___Երեխայի մեջ սերմանել սեր, նվիրվածություն, հավատարմություն, հարգանք, պատասխանատվություն հայրենիքի նկատմամբ: Թեմատիկ ֆիլմերի, տեսանյութերի դիտում և վերլուծություն:

3.4 Ֆիզիկական դաստիարակություն__<<Առողջ ոզի` առողջ մարմնում>> կատարել մարմինը մարզող վարժություններ:

3.5 Աշխատանքային դաստիարակություն__<<Աշխատանքը գեղեցկացնում է մարդուն>> հատուկ զրույց աշխատանքը արդյունավետ կազմակերպելու վերաբերյալ: Հարգանք, կարգապահություն, նվիրվածություն և պատասխանատվություն առաջացնել երեխաների մեջ դեպի աշխատանքը:

3.6 Բնապահպանական դաստիարակություն__Դասարանում ստեղծել կանաչ անկյուն: Ապահովել մասնակցությունը համապատասխան շաբաթօրյակներին: Ակտիվ մասնակցություն ապահովել դպրոցի բակում ընթացող ծառատունկի աշխատանքներին:

3.7 Դպրոց ընտանիք կապը___Հաճախի հրավիրել ծնողական ժողովներ, քննարկել թույլ առաջադիմություն ունեցող աշակերտների հարցը: Էլեկտրոնային օրագրի միջոցով ապահովել դպրոց-ընտանիք կապը:

ՈՒՍՈՒՄՆԱԴԱՍՏԻԱՐԱԿՉԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՀԻՄՆԱԿԱՆ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Ուսումնական շաբաթներ	Ուսումնադաստիարակչական աշխատանքների բովանդակությունը	Կատարման ժամկետը	Կատարողներ
1	1 Կահավորել դասասենյակը: 2 Ստեղծել կանաչ անկյուն:		Դասղեկ
2	1 Սովորողներին մոտիվացնել դասացուցակին: 2 Հերթապահի և ավագի ընտրություն: 3 Դասագրքերի և տետրերի ստուգում:		Դասղեկ
3	1 Կազմել աղյուսակ՝ սովորողների իրավունքները և պարտականությունները:		Դասղեկ
4	Բացատրել անկախության կարևորությունը հայ ժողովրդի համար, ներկայացնել ՀՀ խորհրդանիշները: Դասասենյակում փակցնել ՀՀ դրոշը և զինանշանը:		Դասղեկ
5	1 Կարգի բերել դասասենյակը: 2 Ուշադրություն դարձնել դասարանի մաքրությանը և աշակերտների հիգիենային:		Դասղեկ
6	<<Եթե ես լինեի...>> թեմայով քննարկում: Նպատակն է վեր հանել կարողությունները և հմտությունները:		Դասղեկ
7	<<Ես էլ քեզ նման եմ>> թեմայով զրույցը հնարավորություն կտա ձևավորել հարգանք դիմացինի նկատմամբ:		Դասղեկ
8	<<Կարող եմ օգտակար լինել>> թեման հնարավորություն կտա աշակերտների մոտ ձևավորել բարին և դրական հատկանիշները:		Դասղեկ
9	<<Աշակերտների իրավունքները և պարտականությունները դպրոցում>>: Նպատակն է հստակեցնել աշակերտների մոտ իրենց իրավունքները և պարտականությունները:		Դասղեկ

10	Ովքե՞ր են իմ ընկերները: Ի՞նչն էմ կարևորում ընկերության մեջ:		Դասղեկ
11	<<Ես հայ եմ, իմ հավատքը քրիստոնեությունն է>>: Զրույցի միջոցով կարևորել կրոնի դերը հայերիս կյանքում:		Դասղեկ
12	<<Ընկերությունը և համերաշխություն>> թեմայով զրույց:		Դասղեկ
13	<<Տարերային աղետներ>> թեմայի միջոցով ներկայացնել աշակերտներին, թե ինչպես պետք է վարվել երկրաշարժերի, սողանքների, հրդեհների, փոթորիկների, ցրտահարության ժամանակ:		Դասղեկ
14	<<Գալղ բա՛րի, Նո՛ր տարի>> համադպրոցական միջոցառմանը ուղղված կազմակերպչական աշխատանքներ(դասասենյակը կահավորել միջոցառմանը համահունչ):		Դասղեկ
15	<<Ազնիվ և անկեղծ հարաբերություններ մեր դասարանում>>թեմայի միջոցով նպաստել ազնիվ, անկեղծ և ընկերական միջավայրի ամրապնդմանը:		Դասղեկ
16	<<Տոնո՞ շնորհավո՛ր, Հայո՞ց բանակ>> թեմայի շուրջ զրույց և կազմել պատի թերթ:		Դասղեկ
17	<<Առողջ ապրելակերպ>> թեմայի շուրջ զրույցի միջոցով կարևորել ֆիզկուլտուրայի ժամերին աշակերտների ակտիվ մասնակցության անհրաժեշտությունը:		Դասղեկ
18	<<Իմ հավատը, իմ եկեղեցին>> թեմայի շուրջ զրույցը կնպաստի աշակերտների մոտ քրիստոնեական, բարոյական վեհ արժեքների ամրապնդմանը:		Դասղեկ
19	Քննարկել դասարանային կանոնները աշակերտների հետ, առանցնացնել կարևոր դրույթները և փակցնել դասարանում:		Դասղեկ
20	<<Մեր փոքրիկ բարեկամները>>: Պարզել երեխաների կարծիքը կենդանաբանական այգու մասին: Զարգացնել գրագետ բանավիճելու		Դասղեկ

	հմտությունները:		
21	<<Ժամանակի ճիշտ կառավարում>>: Ժամանակի ճիշտ պլանավորման և կառավարման, առաջնային և երկրորդային դասակարգման և իրականացման հմտությունների ձևավորում:		Դասղեկ
22	<<Ինչու է պետք ներառումը>> թեմայի միջոցով ձևավորել հանդուրժողական վերաբերմունք հատուկ կարիքավոր մարդկանց նկատմամբ:		Դասղեկ
23	<<Պետք է արդյոք խնայել>> թեմայի միջոցով խթանել աշակերտների ստեղծագործական մտածողությանը: Ձևավորել բնության և բնական պաշարների հանդեպ խնայող վերաբերմունք:		Դասղեկ
24	<<Պատասխանատու քաղաքացի>> թեմայի շուրջ զրույցի միջոցով աշակերտը կիմանա, թե ինչպիսին պետք է լինի օրինապահ քաղաքացին:		Դասղեկ
25	<<Ազգային և միջազգային տոներ>> թեմային վերաբերող զրույցի միջոցով հստակեցնել ազգային տոների առանձնակատկությունները և ազդեցությունները:		Դասղեկ
26	<<Քառորյա պատերազմի հերոսները>> թեմայի միջոցով կարևորել հայրենիքի դերը մարդու կյանքում, սահիկահանդեսի դիտում և քննարկում աշակերտների հետ:		Դասղեկ
27	<<Համացանցի վտանգներ և առավելություններ>>: Աշակերտների հետ պարզել, թե ինչ դեր ունի համացանցը մեր կյանքում:		Դասղեկ
28	<<Պատմամշակութային կոթողների նշանակությունը>>: Այցելություն Արշակունիների դամբարան, սահիկաշարի դիտում՝ Արշակունիների դամբարանի գտածոները:		Դասղեկ
29	<<Պետական խորհրդանիշներ>> թեմայով զրույց: Նպատակն է աշակերտներին ներկայացնել ծագման և ձևավորման ուղին:		Դասղեկ

ԴԱՍԱԳՐՔԵՐԻ ԲԱՇԽՈՒՄ

Անվանումը	Մայրենի				Մաթեմատիկա			Ռ. լեզու			Գերմաներեն			Անգլերեն			Հայոց Պատմություն			Երաժշտություն			Տեխնոլոգիա			Բնագիտություն		
	Դաստիարակություն	ստացում	վարձավճար	հանձնեց	ստացում	վարձավճար	հանձնեց	ստացում	վարձավճար	հանձնեց	ստացում	վարձավճար	հանձնեց	ստացում	վարձավճար	հանձնեց	ստացում	վարձավճար	հանձնեց	ստացում	վարձավճար	հանձնեց	ստացում	վարձավճար	հանձնեց	ստացում	վարձավճար	հանձնեց
1	Լ	490		Լ	490		Լ	380		Լ	480		Լ	440		Լ	390		Լ	470		Լ	320		Լ	380		
2	Լ	490		Լ	490		Լ	380		Լ	480		Լ	440		Լ	390		Լ	470		Լ	320		Լ	380		
3	Լ	490		Լ	490		Լ	380		Լ	480		Լ	440		Լ	390		Լ	470		Լ	320		Լ	380		
4	Լ	490		Լ	490		Լ	380		Լ	480		Լ	440		Լ	390		Լ	470		Լ	320		Լ	380		
5	Լ	490		Լ	490		Լ	380		Լ	480		Լ	440		Լ	390		Լ	470		Լ	320		Լ	380		
6	Լ	490		Լ	490		Լ	380		Լ	480		Լ	440		Լ	390		Լ	470		Լ	320		Լ	380		
7	Լ	490		Լ	490		Լ	380		Լ	480		Լ	440		Լ	390		Լ	470		Լ	320		Լ	380		
8	Լ	490		Լ	490		Լ	380		Լ	480		Լ	440		Լ	390		Լ	470		Լ	320		Լ	380		
9	Լ	490		Լ	490		Լ	380		Լ	480		Լ	440		Լ	390		Լ	470		Լ	320		Լ	380		
10	Լ	490		Լ	490		Լ	380		Լ	480		Լ	440		Լ	390		Լ	470		Լ	320		Լ	380		
11	Լ	490		Լ	490		Լ	380		Լ	480		Լ	440		Լ	390		Լ	470		Լ	320		Լ	380		

ԴԱՍՂԵԿԻ ԴԱՍՏԻԱՐԱԿՉԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԹԵՄԱՏԻԿԱՆ

Անցկացման օրը	Դասղեկի անցկացման միջոցառման (դասախոսություն, գրույցներ, դիտողական արշավներ, էքսկուրսիաներ և այլն) բովանդակությանը	Ծանոթություն
26.08.2022	Գիտելիքը ուժ է:	
13.09.2022	Ներքին կարգապահական կանոնները:	
20.09.2022	Պետք է հարգել մեծերին:	
27.09.2022	ՀՀ-ն Երեսույնմեկ տարեկան է:	
4.10.2022	Հայրենիքի հերոս պաշտպանները:	
11.10.2022	Տոնդ շնորհավոր սիրելի ուսուցիչ:	
18.10.2022	Աշակերտների իրավունքները և պարտականությունները:	
1.11.2022	Իմ երազանքը:	
8.11.2022	Ընկերները պետք է օգնեն միմիայն:	
15.11.2022	Իմ վարքը տանը և դպրոցում:	
22.11.2022	Հայրենիքը պետք է սիրել:	
29.11.2022	Ինչպես վարվել երկրաշարժի ժամանակ:	
6.12.2022	Իմ հայրենիքի փոքր անկյունը:	
13.12.2022	Ամանորի հրաշք:	
2012.2022	Ազնիվ և անկեղծ հարաբերություններ:	
10.01.2023	Ներողամտություն, թե վրեժխնդրություն:	
17.01.2023	Տոնդ շնորհավոր հայոց բանակ:	
24.01.2023	Առողջ ապրելակերպ, ֆիզկուլտուրայի և սպորտի կարևոր դերը:	
31.01.2023	Իմ հավատը իմ եկեղեցին:	
7.02.2023	Հայ մշակույթի անցյալը և ներկան:	
14.02.2023	Ես սիրում եմ իմ հայրենիքը:	
21.02.2023	Պատասխանատվության զգացում:	
28.02.2023	Տոնդ շնորհավոր սիրելի մայրիկ:	
07.03.2023	Գարնանային չորս տոները:	
14.03.2023	Մարդիկ, որոնց կուզեյի նմանվել:	
21.03.2023	Իմ կատարած բարի գործը:	
4.04.2023	Երկրագունդը բոլորիս տունն է:	
11.04.2023	Ջանասիրություն և բարեխղճություն:	
18.04.2023	Հայոց մեծ եղեռնի հիշատակի օրը:	
25.04.2023	Ինչպես հոգ տանել բույսերի և կենդանիների մասին:	
02.05.2023	Արցախյան հերոսամարտեր:	



Կրթության բովանդակությունն ապահովում է՝

- 1) սովորողների աշխարհաճանաչման ձևավորումը գիտելիքների և կրթական ծրագրերի ժամանակակից մակարդակին (աստիճանին) համապատասխան.
- 2) սովորողների կողմից ազգային և համամարդկային մշակութային արժեքների յուրացումը.
- 3) հասարակության կատարելագործումը և ազգի զարգացման նոր մակարդակ ապահովող ժամանակակից անհատի ու քաղաքացու ձևավորումը.
- 4) հասարակության մտավոր ներուժի և աշխատուժի վերարտադրությունն ու զարգացումը:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԸ ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ (կրճատումով)

ՀՈԴՎԱԾ 4. ՀԱՆՐԱԿՐԹԱԿԱՆ ԲՆԱԳԱՎԱՌՈՒՄ ՊԵՏԱԿԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ

2. Հանրակրթության բնագավառում պետական քաղաքականության հենքն ազգային դպրոցն է, որի գլխավոր նպատակը համակողմանիորեն զարգացած, հայրենասիրության, պետականության և մարդասիրության ոգով դաստիարակված և մասնագիտական կողմնորոշում ունեցող անձի ձևավորումն է:

4. Հիմնական ընդհանուր կրթությունը պարտադիր է, բացառությամբ օրենքով նախատեսված դեպքերի:

5. Միջնակարգ կրթություն պետական ուսումնական հաստատություններում անվճար է:

6. Հայաստանի Հանրապետությունում իրականացվում է 12-ամյա միջնակարգ կրթություն:

ՀՈԴՎԱԾ 5. ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆՊԱՏԱԿՆԵՐԸ ԵՎ ՊԵՏԱԿԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՄԿՋԲՈՒՆՔՆԵՐԸ

1. Հանրակրթությունը ննպատակառված է սովորողի մտավոր, հոգևոր, ֆիզիկական ու սոցիալական զարգացմանը, նրա անձի որպես ապագա քաղաքացու ձևավորմանը, ինքնուրույն կյանքի, մասնագիտական կողմնորոշման և մասնագիտական կրթության նախապատրաստմանը:

2. Հանրակրթության բնագավառում պետությունը երաշխավորում է հետևյալ սկզբունքների ապահովումը.

1) հանրակրթական մարդասիրական բնույթը, ազգային և համամարդկային արժեքների, մարդու կյանքի ու առողջության, անհատի ազատ և համակողմանի զարգացման առաջնայնությունը, քաղաքացիական գիտակցության կարևորումը անհատի և նրա իրավունքների ու ազատությունների նկատմամբ հարգանքը, արժանապատվությունը, հայրենասիրությունը, աշխատասիրությունը, պատասխանատվությունը, հանդուրժողականությունը, բնապահպանական աշխարհայացքի ձևավորումը.

3) հանրակրթության բնագավառում ժողովրդավարական կառավարման սկզբունքների ապահովումը.

4) ուսումնական հաստատություններում ստեղծագործական աշխատանքի խթանումը, սովորողների վերլուծական, քննադատական մտածողության, գիտելիքների ինքնուրույն ձեռքբերման և կիրառման, տեղեկատվական տեխնոլոգիաների, օգտագործման ունակությունների զարգացման առաջնայնությունը:

ՀՈԴՎԱԾ 20. ՍՈՎՈՐՈՂԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ՈՒ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

1. Ուսումնական հաստատություններում սովորողներն ունեն հավասար իրավունքներ և պարտականություններ: Դրանք սահմանվում են օրենքով և ուսումնական հաստատության կանոնադրությամբ:

2. Սովորողն իրավունք ունի՝

1) ստանալու հանրակրթության պետական կրթական չափորոշչին համապատասխան կրթություն.

2) ծնողի համաձայնությամբ ընտրելու ուսումնական հաստատությունը և ուսուցման ձևը, ինչպես նաև սովյալ ուսումնական հաստատությունում առկա հոսքը, ստանալու կրթական վճարովի ծառայություններ.

3) անվճար օգտվելու ուսումնական հաստատության ուսումնանյութական բազայից.

4) մասնակցելու ներդպրոցական և արտադպրոցական միջոցառումներին.

5) պաշտպանված լինելու ցանկացած ֆիզիկական և հոգեբանական ճնշումներից, շահագործումից, մանկավարժական և այլ աշխատողների ու սովորողների այնպիսի գործողություններից կամ անգործությունից, որով խախտվում են սովորողի իրավունքները, կամ ոտնձգություն է արվում նրա պատվին ու արժանապատվությանը.

6) ուսումնական հաստատության կանոնադրությամբ սահմանված կարգով մասնակցելու ուսումնական հաստատության կառավարմանը.

7) ազատորեն փնտրելու և մատչելիորեն ստանալու ցանկացած տեղեկատվություն, բացառությամբ օրենքով սահմանված դեպքերի.

8) ազատ արտահայտելու սեփական կարծիքն ու համոզմունքները.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԸ ԵՐԵՒԱՅԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ (կրճատումով)

ՀՈԴՎԱԾ 10. Երեխայի մտքի, խղճի և դավանանքի ազատության իրավունքը

Յուրաքանչյուր երեխա ունի մտքի, խղճի և դավանանքի ազատության իրավունք:

Երեխայի հայացքները, համոզմունքները և կարծիքը ենթակա են նրա տարիքին և հասունությանը համապատասխան պատշաճ ուշադրության:

Յուրաքանչյուր երեխա իրավունք ունի ազատորեն արտահայտելու իր կարծիքը, որոնելու, ստանալու և հաղորդելու գաղափարներ ու տեղեկատվություն հաղորդակցության ցանկացած միջոցով: Երեխայի տեղեկատվություն ստանալու իրավունքը կարող է սահմանափակվել օրենքով:

Դավանանքի ազատության և համոզմունքների արտահայտման իրավունքը կարող է սահմանափակվել միայն օրենքով, եթե դա անհրաժեշտ է պետական կամ հասարակական անվտանգության, հասարակական կարգի, երեխայի առողջության, բարոյական նկարագրի կամ այլ անձանց հիմնական իրավունքների և ազատությունների պաշտպանության համար:

Արգելվում է առանց ծնողի կամ այլ օրինական ներկայացուցչի համաձայնության մինչև 16 տարեկան երեխայի մասնակցությունը կրոնական կազմակերպություններին:

ՀՈՂՎԱԾ 11. Երեխայի կրթության իրավունքը

Յուրաքանչյուր երեխա ունի կրթություն ստանալու և ուսումնական հաստատություն ընտրելու իրավունք:

Պետական համապատասխան մարմինները ստեղծում են անհրաժեշտ պայմաններ երեխայի անհատականության դրսևորման, տաղանդի, մտավոր և ֆիզիկական ունակությունների զարգացման համար՝ հիմնելով հանրակրթական, մասնագիտական դպրոցներ, մարզական, տեխնիկական և մշակութային ստեղծագործական մանկական կենտրոններ և այլն: Պետական համապատասխան մարմինները մշակում և իրականացնում են տաղանդավոր երեխաների հայտնաբերման, նրանց դաստիարակության և կրթության կազմակերպման համապատասխան ծրագրեր:

Միջնակարգ կրթությունը պետական ուսումնական հաստատություններում անվճար է:

ՀՈՂՎԱԾ 20. (կրճատումով) Երեխայի հանգստի իրավունքը

Յուրաքանչյուր երեխա ունի հանգստի և ժամանցի, իր տարիքին համապատասխան խաղերին և միջոցառումներին ազատորեն մասնակցելու իրավունք:

ՀՈՂՎԱԾ 22. Երեխայի պատվի և արժանապատվության պաշտպանության իրավունքը

Յուրաքանչյուր երեխա ունի պատվի և արժանապատվության իրավունք:

Ոչ մի երեխա անձնական, ընտանեկան կյանքի, գրագրության և հեռախոսային խոսակցության գաղտնիության կամ բնակարանի անձեռնմխելիության իր իրավունքներն իրականացնելիս չի կարող ենթարկվել կամայական, ապօրինի միջամտության կամ իր պատվի և արժանապատվության նկատմամբ ոտնձգությունների:

Ուսումնադաստիարակչական հաստատություններում երեխայի ուսուցումն ու դաստիարակությունն իրականացնող անձանց ու երեխայի փոխհարաբերություններն իրականացվում են փոխադարձ հարգանքի հիման վրա:

Երեխայի պատվի և արժանապատվության դեմ ոտնձգություն կատարած յուրաքանչյուր անձ, ներառյալ ծնողները կամ այլ օրինական ներկայացուցիչները, երեխայի դաստիարակությունը և ուսուցումն իրականացնող այլ անձինք պատասխանատվություն են կրում Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:

ԳՈՐԾԱԾՈՒԹՅԱՆ ԵՎ ՊԱՀՊԱՆՄԱՆ ԿԱՐԳԸ

1. <<Ուսումնական հաստատության դասղեկի աշխատանքային տարեկան ծրագիր>> մատյանը նախատեսված է դասղեկի կողմից դասարանի հետ բազմակողմանի դաստիարակչական աշխատանքների նպատակամղված գործունեությունն, աշակերտների ուսումնառության զարգացման հիմնական ուղենիշները գիտամանկավարժական տեսանկյունից համակարգելու, նախագծելու համար:

2. Դասղեկը աշխատանքային տարեկան ծրագիրը կազմելիս նպատակահարմար է հաշվի առնել՝

- դաստիարակչական խնդիրների ճշտությունն ու իրատեսությունը,
- Աշակերտների գործունեության կազմակերպման գույակցվածությունը ուսումնադաստիարակչական աշխատանքների նախագծվելիք գործընթացներում,
- դասավանդող ուսուցիչների, մյուս մանկավարժների ու աշակերտների, մանկավարժների ու ծնողների միասնականությունը,
- ներդասարանական, ներդպրոցական և արտադպրոցական ուսումնադաստիարակչական աշխատանքների ներդաշնակ կապը,
- աշակերտների տարիքային, անհատական առանձնահատկությունները, երեխաների (անհատական և ընդհանուր) դաստիարակվածության մակարդակի ու նրանց կյանքի պայմանների իրատեսությունը,
- տարեկան պլան-ծրագրի փոխկապվածությունը և համաձայնեցվածությունը ուսումնական հաստատության մյուս ծրագրերի, պլանների հետ:

Դաստիարակչական աշխատանքների հիմնական խնդիրները պետք է չլինեն ոչ չափից դուրս ընդհանուր, ոչ էլ շատ կադապարված, նեղ, այլ անհրաժեշտ է նկատի ունենալ անձի ձևավորման ամբողջականությունը և դաստիարակության յուրահատկությունները՝ տարիքը, սոցիալական շրջապատը:

Մատյանը հնարավորություն է տալիս դասղեկին, ըստ ուսումնական շաբաթների համակարգելու դաստիարակչական գործընթացը, որը թույլ կտա տեսանելի դաստիարակչական գործընթացը, որը թույլ կտա տեսանելի դարձնելու ոչ միայն կատարվելիք աշխատանքները, այլև դրանց իրագործման ճշգրիտ ուղիները:

Պլան-ծրագրի բաժինների հաջորդականությունը և սերտ շարունակական կապը թույլ կտա տեսնելու աշակերտների մտավոր կարողությունների աստիճանական զարգացումը և վարքի դրական դրսևորումները, ծնող-դպրոց կապը:

- Դասղեկի տարեկան ծրագիր-պլանը համարվում է ուսումնական հաստատության համադպրոցական ուսումնադաստիարակչական աշխատանքների ծրագիր-պլանի բաղկացուցիչը:
- Դասղեկի աշխատանքային ծրագիր-պլանը կազմվում է ուսումնական տարին սկսելուց առաջ և ըստ սահմանված կարգի հաստատվում է տնօրենի կողմից:
- 10-րդ և 11-րդ էջերի, <<ստացավ>> և <<հանձնեց>> սյունակներում համառոտագրել ստացվելիք և հանձնված դասագրքերի պիտանելիության գնահատականները գերազանց –Գ, լավ –Լ, բավարար –Բ, անմխիթար –Ա

Ուսումնական տարին ավարտելուց հետո դասղեկը անցած ծրագիր-պլանի վերլուծության հիման վրա կազմում է նորը: Պլան-ծրագիրը դասղեկը պահպանում է իր մոտ մինչև տվյալ դասարանի ուսումնառության աստիճանի՝ I-IV, V-IX, X-XII, ավարտելը:

ՀՀ ԿԳՆ նախարարի 15.08.2000թ. թիվ 264Մ հրամանի համաձայն
համարվում է պարտադիր գործածության երաշխավորված փաստաթուղթ
© Կազմող՝ Վ. Միրումյան

© Տպագրության է պատրաստվել Վիամիր ՄՊԸ հրատարակության կողմից, 3000 օրինակ